

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՆՐԱԴՐՈՒՅԹ

[24]

ՔՈՎԱՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՆՐԱԴՐՈՒՅԹ

[№ 2]

1920 թ.

ՆՈՅԵՄԲՐԻ 29

1929 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ  
5 ՏԱՐՈՒՄ

5783

=====

ՊՈՏԱԿՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929

Հրատար. № 1145

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՑԵՐԿՎՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՑԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեալ. № 2902(բ.) Գալ. № 1266 Տիր. 15,000


Տ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ  
ՀԻՆԳ ՏԱՐՈՒՄ

A

Խորհրդայնացումից առաջ Հայաստանում գոյություն ունելին 4-5 մանր ելեկտրակայաններ, վորոնց մեքենաների ուժեղությունը չեր գերազանցում 400 ձիու ուժից։ Սպասարկում եյին նրանք գլխավորապես քաղաքների լուսավորության կարիքները, այն ել վոչ լրիվ չափով։

Հաշվի առնելով այն սերտ կապը, վոր գոյություն ունի Ելեկտրիֆիկացիայի և յերկրի ժողովրդական տնտեսության արդյունաբերական և ընդհանուր տնտեսական աճման միջև, ելեկտրաշինարարությունն ընդունել և մեզանում հսկայական չափեր։ Այդ արտահայտավում ե մի շարք ջրային ելեկտրական կայաններով, վորոնց մի մասը արդեն կառուցված ե, մի մասը կառուցվում ե և միքանիսը ծրագրված են կառուցվելու։

Այն ահագին մարդկությունը, վոր



ունի ելեկտրիֆիկացիան մեր հանրապետությունը ինդուստրիացման լենթարկելու և սոցիալիզմ կառուցելու բնագավառում, մեզ դրդում ե տալ այստեղ համառոտ տեսություն թե մեր ունեցած արդեն այս գծով նվաճումների և թե մեր մոտակա անելիքների, վոր նախատեսվում են հնգամյա պլանով (1929-30—32-33 թ.): Ելեկտրաշինարարության աճման հիմնական տվյալները մենք տալիս ենք այստեղ, բաժանելով տեսությունը յերկու մասի՝ «Գյուղական ելեկտրիֆիկացիա» և «Արդյունաբերական ելեկտրիֆիկացիա», նկատի առնելով դրանցից յուրաքանչյուրի հատուկ առանձին նշանակությունը:

### Գյուղական ելեկտրիֆիկացիա

Գյուղատնտեսության մեջ ելեկտրոներգիայի կիրառման նշանակությունն անչափ մեծ է: Նա անդրադառնում է վոչ միայն տնտեսության բնագավառում, վորտեղ նա հեղաշրջում ե մեր գյուղացու մըշակման նահապետական ձևերը և ավելացնում յերկրի հարստությունը, այլև գյու-

դացիության ամբողջ կենցաղի վրա, լուսավորելով վոչ միայն գյուղի արտաքինը՝ նրա տներն ու փողոցները, այլև նրա ըընակիչների մասավոր և հոգեկան աշխարհը, բարձրացնելով նրանց կուլտուրական մակարդակը ելեկտրիֆիկացիայի հետ զուգընթաց ստեղծվող լեռեկոյան դասընթացքներով, գրադարաններով, ակումբներով և այլն:

Ելեկտրաշինարարության այդ հսկալական նշանակությունն ե, վոր աչքի առաջ ուներ Վ. Ի. Լենինը, յերբ նետում եր իր հոչակավոր նշանարանը՝ «Ելեկտրիֆիկացիայի միջոցով դեպի սոցիալիզմ»:

Չնայած այն մեծ դժվարություններին, վորոնցով ելեկտրականությունն սկզբներում արմատ է գցում գյուղացու կենցաղի մեջ, գյուղական ելեկտրաշինարարությունը մեր յերկրում 1921 թվից մինչև 1928 թ. աճեց առավել, քան կարելի յեր սպասել: 1921 թվին մեզանում կար մեկ հատ գյուղական ելեկտրակայտն 33 կիլովատտի ուժիղությամբ, 1928 թվին մենք ունենք արդեն 9 կայան, վորոնց ուժեղությունը հավասար է 381 կիլովատտի (11-12 անգամ ավել, քան 21 թվին):

Այս թվերը բավականին պերճախոս են և կարոտ չեն ընդարձակ մեկնաբանութլունների, սակայն և այդ թվերը մի չընչին մասն են կազմում այն մեծ աշխատանքների գիմաց, վոր նախատեսում ե մեր հնգամյա պլանը գյուղական ելեկտրաշինարարության բնագավառում, և վորի թափն անհամեմատ ավելի ուժեղ ե:

Հնգամյակի ընթացքում նախագծված ե ըստ գավառների և գավառամասերի ելեկտրիֆիկացիալի լենթարկել 7 և 8-րդ հջիրում հիշված գյուղերը:

Այսպիսով, հնգամյակի վերջին ելեկտրիֆիկացիայի պիտի լենթարկվի 159 գլուղ և ավտոն:

Թե ինչ ուժեղություն պիտի ունենա մեր գյուղական ելեկտրակայանների ցանցը, և դրանից վորքան պիտի սպառի մեր գլուղատնտեսությունը, մենք այդ տեսնում ենք 9-րդ եջի աղյուսակից:

Այսպիսով, հենց այս 28-29 տարում գլուղական ելեկտրակայանների ուժեղությունը պիտի հնգապատկվի (381 կիլովատտի դիմաց կունենանք 1.485 կիլովատտ ուժ), իսկ հնգամյակի վերջին, յերբ գլու-

<b>ԳԱՎԱՌՆԵՐ ՅԵՎ ԴԱ- ՎՈՌԱՄԱՍԵՐ</b>	<b>ՀՆԳԱՄՅԱԿՈՎ ԵԼԵԿՏՐԻՓԻ- ԼԱՑԻԱՋԻ յԵՆ- ԲԱՐԻՎՈՂ ԳՅՈՒՂԵՐԻ Քա- նակը</b>
<b>ԵԵՐԵՎԱՆԻ գավառ.</b>	
1. Ախտայի գավառամաս	8
2. Կոտայքի      »	5
3. Դամարլուկի    »	12
4. Վեդի-Բասարի    »	8
5. Բաշդիշենի    »	7
<b>Եղմիածնի գավառ.</b>	
1. Աշտարակի    »	10
2. Եղմիածնի    »	8
3. Արշավերի    »	5
<b>Լինինտեկանի գավառ.</b>	
1. Փանիքի գավառամաս	8
2. Լինավանի    »	5
<b>Դարձագյազի գավառ.</b>	
1. Քեշիշենդի գավ. մաս	3
2. Պատմաշենի    »	10

**Զանգեզուրի գավառ.**

- |                       |   |
|-----------------------|---|
| 1. Գորիսի գավառամաս   | 4 |
| 2. Ղափանի           » | 4 |

**Մեղրու գավառ.**

- |                     |   |
|---------------------|---|
| 1. Մեղրու գավառամաս | 5 |
|---------------------|---|

**Դիլիջանի գավառ.**

- |                       |    |
|-----------------------|----|
| 1. Դիլիջանի գավառամաս | 4  |
| 2. Կրասնոսելսկի   »   | 3  |
| 3. Բարանայի       »   | 4  |
| 4. Իջևանի       »     | 11 |

**Նոր-Բայտղեսի գավառ.**

- |                         |   |
|-------------------------|---|
| 1. Նոր-Բայտղեսի գավ. մ. | 3 |
|-------------------------|---|

**Լոռի-Փամբակի գավ.**

- |                          |   |
|--------------------------|---|
| 1. Ղարաքիլիսայի գավ.մաս. | 4 |
| 2. Ջորաշենի       »      | 6 |
| 3. Ստեփանավանի   »       | 6 |
| 4. Դսեղի       »         | 7 |
| 5. Ռիկովի       »        | 5 |
| 6. Սուրենականի   »       | 9 |

	28/29 P.	29/30 P.	30/31 P.	31/32 P.	32/33 P.
1. Ուժեղություններով կիրավառաներով	1.485	1.805	3.155	4.575	5.687
2. Ելեկտրո-էներ-					
գիւյի սպառումը Ժիշտն կիրավառա- ություն	3,66	4,17	6,89	9,26	12,94

դական ելեկտրակայանների թիվը հասնելու յե 159 ի; նրանց ուժեղությունը բարձրանալու յե մինչև 5.687 կիլովատտ, և դլուղերն սպառելու յեն ելեկտրուեներգիայից մոտ 13 միլիոն կիլովատտ-ժամ, վոր, անշուշտ, մեր փոքրիկ էերկրի համար պատկառ լի ։ Եթե և մեր գյուղացիության մութու խավար կենյաղի վերաբերմամբ մեծ և հեղափոխականուցնող դեր ունի կատարելու:

### Արգլունաբերական ելեկտրիֆիկացիա

Արգլունաբերության զարգացման հիմք և հանդիսանում եժան ելեկտրոնեներգիան, և հենց այս հիմքի վրա յե, վոր Հայաստանում ստեղծվել են մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ՝ տեքստիլ, կարգիդի, փայտամշակման, կաշու. և այլ գործարաններ, և վոր մեր պետական արդյունաբերությունը, շնորհիվ իրեն հայթայթվող եներգիայի եժանության, իվիճակի յե դառնում մեծապես կրճատելու իր արտադրության ծախսերը, մանավանդ այն ճյուղերում, վորտեղ վառելիքի և ելեկտրականության սպառումը ծախսերի զգալի տոկոս և կազմում (կարգիդի, քիմիական արդյունաբե-

ըութլան և այլն), իջեցնելով արտադրանքի ինքնարժեքը և եժանացնելով ապրանքը:

Հնգամյա պլանով արդյունաբերության համար ծրագրված ելեկտրիֆիկացիայի ընթացքն ու սպառումը տալիս են 12-րդ եզի աղլուսակի թվերը:

Այսպիսով, հնգամյակի ընթացքում արդյունաբերական ելեկտրիֆիկացիայի բընագավառում, ծրագրված են անհամեմատ ավելի լայն թափով և բարձր տեմպերով աշխատանքներ, քան գլուղատնտեսության համար, վորպիսի թափն ու տեմպերը բնական են, նկատի ունենալով խորհրդակին իշխանության հիմնական նպատակը՝ արագացնել հնարավորության սահմաններում լերկրի ինդուստրիացմտն ընթացքը, զարգացնելով մեր արդյունաբերական կարողությունները, հատկապես մեր քիմիական արդյունաբերական ճյուղերը, վորոնք ամենախոշոր չափով սպառում են ելեկտրուներդիան:

Ինչպես տեսնում ենք աղլուսակից, 28-29 թվին ծրագրված մեր ելեկտրացանցի ուժեղության դիմաց, վոր լինելու յե 7.990 կիլովատտ, հնգամյակի վերջին (32-33 թվին) ալիդ ուժեղությունը բարձրանալու յե մինչև 38.700 կիլովատտ, իսկ եներգիայի սպառման քանակը նույն ժամանակաշրջանում 27.600.000 կիլովատտ ժամից հասնելու յե մինչև 154.800.000 կիլովատտ-ժամ:

	28/29 P.	29/30 P.	30/31 P.	31/32 P.	32/33 P.
1. Ելեկարգականու- թյան աճումը՝ կիրավառաներով՝			7.990	11.740	14.140
2. Եներգետիկ լսո- պառաղության ա- ճումը՝ միջնական լովառուժամբով՝	27,6	37,4	47,1	104,6	154,8

Քաղաքներին Ելեկտրոներգիայի մասա-  
կարգումը

Հիդրո-ելեկտրակայաններից բաց թողնը-  
վող եներգիայի եժանությունն ամենալայն  
չափով հնարավորություն և տալիս քաղաք-  
ների բնակչությանը ոգտվելու նրանից:  
Յերեանը, վոր արդեն  $60^{\circ}/\circ$ -ով լենթարկ-  
ված և ելեկտրիֆիկացիայի, միակը չե Խոր-  
հըրդային Հայաստանի քաղաքների մեջ. նրա  
որինակին հետեւում են լենինականը և այլ  
քաղաքները:

Բնակչությունն ոգտվում և ելեկտրակա-  
նությունից վոչ միայն բնակարանների  
լուսավորության նպատակով. հաջողվում է  
աստիճանաբար «ելեկտրականացնել», այս-  
պես ասած, նաև նրա կենցաղը. ելեկտրա-  
կան թեյամանների, ութոների, վառարան-  
ների, խոհանոցի համար հատկացված զա-  
նուղան ամանների և այլ ելեկտրական պա-  
րագաների գործածությունը շատ տնտեսու-  
թյունների արդեն իսկ հնարավորություն  
և տվել հրաժարվելու եներգիայի ուրիշ տե-  
սակներից (ցախ, ածուխ, անտրացիտ և ալյն):

Ելեկտրոներգիայի եժանության շնոր-  
հիվ և, վոր սկսել ե զարգանալ նաև մեր  
տնայնագործությունը:

Քաղաքներում սպառվող և սպառվելիք  
եներգիայի նկատկերը տալիս են հետեւյալ  
թվերը՝

		28/29	30/31	31/32	32/33
<b>1.</b>	<b>Ө к р һ ү ә ү</b>				
	<i>и) П.Ժ.Ղ.Ղ. Բ. Խ. Ա. Ն. (կիլովատտ)</i>	1.820	2.104	2.445	2.946
	<i>բ) Ս.Ղ.Ա. Ղ. Բ. Խ. Ա. Վ. Խ. Ա. Խ. Հ. Խ. Ք. Ա. Խ. Ա. Խ. (միլ. կիլ. -ժամ)</i>	2.70	3.27	3.87	4.45
<b>2.</b>	<b>Լ. Կ. Մ. Խ. Ա. Կ. Ա. Ա. Ա.</b>				
	<i>и) П.Ժ.Ղ.Ղ. Բ. Խ. Ա. Ն. (կիլովատտ)</i>	34	793	1.396	1.852
	<i>բ) Ս.Ղ.Ա. Ղ. Բ. Խ. Ա. Վ. Խ. Ա. Խ. Հ. Խ. Ք. Ա. Խ. Ա. Խ. (միլ. կիլ. -ժամ)</i>	0.5	1.19	1.71	1.97

Հանրագումարի բերելով բոլոր վերոհիշյալ տվյալները, վորոնք վերաբերում են արդյունաբերության, գյուղատնտեսության և քաղաքների կարիքներին ելեկտրականությամբ սպասարկիլու զործին, 1933 թ. մեջանում կունենանք

Ելեկտրական տոկի (հոսանքի)	Ընդունիչ-	Կիլովատտ
ների կառուցված ու-		ժամ
ժեղությունը՝		50,330
Եներգիայի սպառողութ.՝		174.600.000

#### Նոր կառուցումներ

Բոլոր սպառողների պահանջն ելեկտրուներգիալով ծածկելու համար անհրաժեշտ ե, բացի այժմ աշխատող ելեկտրակայաններից, կառուցել նոր հիդրոկայաններ ևս:

Այդ նոր կառուցվող կայանների թվին հն պատկանում՝

ա) Զորագետի ելեկտրակայանը՝ ուժեղությամբ 22.000 կիլովատտ.

և բ) Քանաքեռի ելեկտրակայանը՝ ուժեղությամբ 32.000 կիլովատտ:

Բոլոր խոշոր ելեկտրակայանները (Յերևանինը, Քանաքեռինը, Զորագետինը, Լենինականինը) արդյունաբերության և գյուղատնտեսության վարիքներին անընդհանուր սպա-

ՏՐԱՋԻՐԻ  
ՀԱՎԱՐԱՐԻ

սարկելու նպատակով իրար հետ պիտի շաղ-  
կապվեն հանձնման գծերով 110.000 վոլտի  
լարվածությամբ։

Առանձին շրջաններում կկառուցվեն գյու-  
ղական հիդրավլիկ կայաններ, թվով 7 հատ,  
վորոնց ընդհանուր ուժեղությունը հասնե-  
լու յե 1.500 կիլովատտի։

### ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպես, ուրեմն, 1933 թվին Խ. Հայաս-  
տանի մեծագույն մասը ծածկված կլինի ե-  
լեկտրական գծերի ցանցով, և ելեկտրակա-  
լանների ընդհանուր ուժեղությունը հաս-  
նելու յե 60.000 կիլովատտի, այսինքն՝  
1920 թվի դիմաց բարձրանալու յե 24 ան-  
գամ կամ, այլապես, կառուցված ուժեղու-  
թյունը 0,3 կիլովատտից ավելանալու յե  
մինչև 60 կիլովատտ 1.000 քնակչին (հաշվե-  
լով Հայաստանի սպառնակությունը հավա-  
սար 1 միլ. մարդու), իսկ եներգիայի ըս-  
պառողությունը մի հոգուն հասնելու յե  
174 կոլովատտ-ժամի։

Այս նորմաներն ընդհուպ արդեն մոտե-  
նում են յեվրոպական յերկրների-տվյալնե-  
րին և կարող են լուրջ պատվանդան հանդի-  
սանալ հնգամյակով ծրառումած՝ մոխոհ հն-  
դուստրիացմանը։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FI 0045769